ԳՐ. ԱՐԾՐՈՒՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏՐ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Կապիտալիստական արտադրության զարգացմանը զուգընթաց նրան հատուկ հակասություններն իրենց ներթաքուն, քողարկված վիճակից աստիճանաբար բացահայտվում են։ Սրվում և խորանում է կապիտալիստական արտադրաեղանակի հիմնական հակասությունն իր դրսևորման բոլոր ձևերով։ Սա արտադրության զարգացման այն փուլն է, երբ տեխնիկական առաջադիմությունը, բանվորների շահագործման աստիճանի բարձրացումը, նրա թվաքանակի աճը, կապիտալի կենտրոնացումն ու համակենտրոնացումը, օրգանական կազմի աճը կապիտալի կուտակումը հասցնում են հսկայական չափերի։ Սկսում է գործել կապիտալիստական կուտակման ընդհանրական օրենքը, որի հետևանքով կապիտալիստական հասարակարգի բոլոր հակասություններից հատկապես տեսանելի է դառնում անտագոնիզմը աշխատանքի և կապիտալի, պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։ Երբ այն հասնում է սպառնալի չափերի, աշխատանքի և կապիտալի փոխհարաբերությունը դառնում է բուրժուական քաղաքատնտեսության կենտրոնական հարցերից մեկը։ Սակայն հենց այս ժամանակաշրջանում էլ տեղի է ունենում կտրուկ շրջադարձ բուրժուական քաղաքատնտեսության մեջ։ Այժմ արդեն «...հարցը վերաբերում էր ոչ այն բանին, թե արդյոք ճիշտ է այս կամ այն թեորեման, այլ այն բանին, թե այդ թեորեման օգտակար է, թե վնասակար, հարմար է, թե անհարմար, համապատասխանում է ոստիկանական նկատառումներին, թե ոչ։ Անշահախնդիր հետազոտության տեղը բռնում են վարձկան գրչակների ճակատամարտերը, անաչառ ուսումնասիրությունները փոխարինվում են կանխակալ ու հաճոյակատար չատագովությամբ»[1], այսպես է բնութագրում Մարքսը գռեհիկ քաղաքատնտեսության ծնունդը։

Ի տարբերություն գռեհիկ տնտեսագետների, որոնք անցել էին կապիտալիզմի բացահայտ չատագովության բոլոր սահմանները, բուրժուական տնտեսագետներից ոմանք փորձում էին «...կապիտալի քաղաքատնտեսությունը համաձայնեցնել պրոլետարիատի նկրտումներին, որոնք այլևս չէր կարելի անտեսել»[2] և «վերին աստիճանի անարդար կլիներ այդ մարդկանց մի կույտի մեջ խառնել գռեհիկ տնտեսագետների չատագովների հետ»[3]։ Այդպիսի տնտեսագետներից էր Ջ. Ս. Միլը Անգլիայում, որը բողոքում էր աշխատավորների կյանքի դժվարին պայմանների, եկամուտների անհավասար բաշխման դեմ։ Նման բաժանում տեղի ունեցավ նաև հայ բուրժուական տնտեսագիտության մեջ։ Տնտեսագետներից ոմանք հետևեցին քաղաքատնտեսության գռեհիկ դպրոցին, իսկ մյուսները աշխատանքի և կապիտալի փոխհարաբերությունը քննում էին բուրժուական հումանիզմի դիրքերից։ Վերջիններիս թվին էին պատկանում հայ լիբերալ բուրժուական տնտեսագիտական մտքի առաջադեմ ներկայացուցիչներ Գր. Արծրունին, Ավ. Արասխանյանը և Գր. Վարդանյանը, որոնք հեռու էին բուրժուական հասարակարգի հակասությունները քողարկելու մտայնությունից, սակայն, նրանց համոզմամբ, այդ հասարակարգը հնարավորություն ունի սոցիալական վերափոխումների միջոցով աս-

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 13։

2 К. Маркс, Ф. Энгельс, Соч., 2-ое изд., т. 23, с. 17.

3 Նույն տեղում, էջ 625։

տիճանաբար վերացնել դրանք։ Աշխատանքի և կապիտալի հակասության վերացման գործում նրանք մեծ կարևորություն էին տալիս ժողովրդական վարկի, ինչպես նաև կոոպերատիվների կազմակերպմանը։

Արևելահայ հրապարակախոսության մեջ առաջին անգամ բանվորական հարցով զբաղվեց «Մշակ» թերթը։ Հայ լիբերալների օրգանն ընթերցողներին ծանոթացնում էր Եվրոպայում տեղի ունեցող բանվորական շարժումներին, լայնորեն մեկնաբանում արհմիությունների գործունեությունը, կոոպերատիվ շարժումները։ «Մշակի» աշխատակիցներից բանվորական հարցին ամենից հաճախ անդրադառնում էր նրա խմբագիր Դր. Արծրունին։ Հակադրելով կապիտալիզմը ֆեոդալիզմին, հայ տնտեսագետը գտնում էր, որ բուրժուական հասարակարգը ստեղծում է բոլոր հնարավորությունները անհատի ազատության համար, սակայն այդ ազատությունը, նրա կարծիքով, միայն իրավական ազատություն է։ Բուրժուական հասարակությունը հարուստ է, գրում է Արծրունին, և այդ հարստությունից «...իրավունքով յուրաքանչյուրը պիտի իր մասը ստանա», բայց «...մեր հասարակության մեջ և Եվրոպայում, առհասարակ, ամեն գումարատեր հասարակության մեջ չի կատարվում այդ հասարակ կանոնը»[4]։ Նրա կարծիքով՝ հասարակության այն անդամները, որոնց աշխատանքով է ստեղծվում հարստությունը, ստանում են միայն դրա չնչին մասը։ «Այն մարդիկ,— գրում է Արծրունին,— որոնք իրենց ամբողջ աշխատանքը և կյանքը նվիրում են բնության հետ պատերազմելուն, այն մարդիկ, աշխատողները,— չեն տեսնում այն վարձատրությունը, որ կարողանար համարվիլ բավականացուցիչ ամենահասարակ ապրուստի համար»[5]։ Հետաքրքրիրն այն է, որ Դր. Արծրունին հարստության անարդար բաշխումը համարում է «առհասարակ ամեն գումարատեր հասարակության» բնորոշ գիծը։ Բաշխումն անհավասար է հատկապես զարգացած կապիտալիստական երկրներում, որտեղ հարստությունը, գործող կապիտալը հասել են հսկայական չափերի, իսկ երբ «...մի երկրի մեջ անչափ մեծ հարստություններ կան, նույն երկրում անպատճառ կհանդիպենք և մեծ չքավորության»[6],— գրում է Արծրունին։ Նրա համոզմամբ, երբ երկրի հարստությունները կուտակվում են մի քանի անհատների ձեռքում, նշանակում է այն անհավասար է բաշխվում և «...որքան ավելի հարստությունը կենտրոնանում է մի քանի ձեռքերում, այնքան պակասում է ընդհանրության նյութական բավարարության չափը»[7]։ Արծրունու կարծիքով հարստության և աղքատության բևեռացումը ծայրահեղության էր հասնում Անգլիայում։ Կուտակման չափերը հսկայական էին նաև ԱՄՆ-ում, որտեղ քաղաքացիական պատերազմից հետո սկսվեց տենդային տնտեսական գործունեություն. հիմնվեցին գործարաններ, մշակվեցին հանքերը, կառուցվեցին երկաթուղիներ, իսկ ձեռնարկատերերի հարստությունները հասան առասպելական չափերի։ «Այդ բոլոր ահագին, նույնիսկ առասպելական հարստությունները,— գրում է Արծրունին,— ինչպես միշտ մեծ մասամբ կազմակերպվում էին ոչ այնքան ազնիվ ճանապարհով, այլ մեծ մասամբ հարստահարությամբ, վտանգավոր սպեկուլյացիայով և բորսային խաղով։ Բայց մինչև որ այդ առասպելական հարստությունները մի քանի անհատների ձեռքում էին դիզվում, ամերիկական ամբոխի մեջ հետզհետե նկատելի էր դառնում չքավորության զարգանալը... բանվորները անգործ էին մնում... հետզհետե առաջ էր գալիս երկրի մեջ ընդհանուր տնտեսական ճգնաժամ»[8]։ Թեև Արծրունին հանգեց այն սխալ եզրակացության, որ հարստության և աղքատության բևեռացման պատճառը հասարակական հարստության անհավասար բաշխումն է, սակայն տվյալ դեպքում արժեքավորն այն է, որ

4 «Մշակ», 1872, № 27։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, 1887, № 58։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

նրա համողմամբ հասարակական հարստության աճը կապիտալիզմի պայմաններում ուղեկցվում է աղքատության աճով։

Ինչպես տեսնում ենք, Արծրունին կռահում էր կապիտալիստական կուտակման ընդհանրական օրենքը և հասկանում, թե ինչպիսի հետևանքներ ունի այդ օրենքի գործողությունը։ Նա իրավացիորեն ընդգծում էր բանվորների և կապիտալիստների շահերի հակադրության փաստը։ Ի տարբերություն գռեհիկ տնտեսագետների՝ Արծրունին չէր քողարկում կապիտալիստական շահագործումը։ «Հասարակության կազմվածքի երկու ծայրերը կազմում են աշխատողները [և] կապիտալիստները (գումարատերերը), որոնցից առաջինները արդյունաբերում են կարելի է ասել առանց սպառելու, վերջինները ընդհակառակը... սպառում են առանց արդյունաբերելու»,— գրում է նա[9]։ Հատկապես հետաքրքրական է Արծրունու «Ի՞նչ է բուրժուազի» հոդվածը, որտեղ նա ուսումնասիրել է բուրժուական հասարակության դասակարգային կառուցվածքը։ Արծրունին իրավամբ գտնում էր, որ եվրոպական զարգացած կապիտալիստական երկրների ամենաբնորոշ կողմը դասակարգային պայքարն է։ «Հասարակության զանազան դասերի մեջ պատերազմը,— գրում է նա,— արդյան եվրոպական կյանքի գլխավոր հատկությունն է»[10]։ Բուրժուական հասարակության հիմնական դասակարգերը, Արծրունու կարծիքով, երկուսն են՝ բուրժուազիան և պրոլետարիատը։ Բացի այս դասակարգերից, նա նշում է նաև ազնվականությանը, որը, սակայն, որպես դասակարգ ապրել է իր դարը։ Արծրունին մանր արտադրողներին և բանվորներին միավորում է մեկ դասակարգի մեջ, որը նա անվանում է աշխատողների դասակարգ։ Սակայն մի այլ հոդվածում նա այդ դասակարգերն առանձնացնում է միմյանցից, միաժամանակ նշելով, որ մանր արտադրողները մշտապես գտնվում են ունեղրկման վտանգի տակ։ Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման պրոցեսում մանր և միջակ ձեռնարկությունները չդիմանալով մրցակցությանը կուլ են գնում խոշորներին, իսկ դրանց ձեռնարկատերերը՝ զրկվելով արտադրության միջոցներից, համալրում են վարձու բանվորների բանակը։ Խոշոր կապիտալիստը «...ձգում է ընդհանուր կենտրոնին այն ամեն դրամական միջոցները, որոնք մինչև այն դրված էին փոքր արդյունագետների շրջանում և իրանք, փոքր արդյունագետները, իրենց կողմից դառնում են վարձկան աշխատողներ»[11],— գրում է Արծրունին։ Այսպիսի ճակատագիր էր սպասվում նաև բազմաթիվ մանր արհեստավորների։ Այս իմաստով էլ նա մանր արտադրողներին համարում էր պոտենցիալ պրոլետարներ։ Մեր կարծիքով ճիշտ չէ Ս. Զուրաբյանը, երբ գրում է, որ Արծրունին «...դասակարգային իմաստով բանվորներին նույնացնում է մանր արտադրողների հետ»[12]։ Հակառակ այս կարծիքի, նշենք, որ Արծրունին նրանց չէր նույնացնում հենց դասակարգային իմաստով։ Լիբերալ բուրժուական գաղափարախոսը, ի տարբերություն մանր արտադրողների, բանվոր դասակարգի մեջ տեսնում էր այն ռեալ ուժը, որը կարող էր լրջորեն սպառնալ բուրժուական հասարակարգի գոյությանը։ Այդ պատճառով նա գտնում էր, որ անհրաժեշտ է հնարավորին չափ կասեցնել մանր արտադրողների պրոլետարացման պրոցեսը։ Ճիշտ է Արծրունին այս դասակարգերի միջև ընդհանրություն է տեսնում այն իմաստով, որ մանր արտադրողի, ինչպես և բանվորի ապրուստի միակ միջոցն անձնական աշխատանքն է, սակայն նա պարզորոշ ընդգծում է նաև նրանց տարբերությունները։ Արծրունին մանր արտադրողներից բանվորներին տարբերում է նրանով, որ վերջիններս զուրկ են բոլոր տեսակի արտադրության միջոցներից։ Արդյունաբերության «...արագ և ընդարձակ զարգացումը ծնեց սեփականու-

---

9 Նույն տեղում, № 47։

10 Նույն տեղում, 1872, № 43։

11 Նույն տեղում, № 24։

12 Ս. Շ. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Երևան, 1956, էջ 343։

թյուն չունեցող պրոլետարային աշխատողների դասը»[13],— գրում է նա։ Այդ երևույթը, ըստ Արծրունու, տեղի ունի նաև գյուղատնտեսության մեջ, որտեղ մանր արտադրողների ունեզրկման հետևանքով ձևավորվում է գյուղական պրոլետարիատ։ «Մենք տեսնում ենք, ուրեմն, որ ոչ թե միայն արվեստագործական պարապմունքը ծնում է սեփականություն չունեցող մշակների դասը, բայց նմանապես և երկրագործությունը»[14],— գրում է Արծրունին։ Այնուհանդերձ, նրա կարծիքով, մանր արտադրողների և վարձու բանվորների շահերն ընդհանուր են, քանի որ «...նրանք իրանց ապրուստի աղբյուրը միշտ անձնական աշխատանքի մեջ են տեսնում»[15]։ Սակայն, ըստ Արծրունու, շահերի հակադրությունն ակնհայտորեն դրսևորվում է պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։ Հակասությունը նրանց միջև ավելի է սրվում կապիտալիստական խոշոր արտադրության զարգացման հետ։ Կապիտալիստները, որոնք, ի տարբերություն բանվորների, «սպառում են առանց արդյունաբերելու», յուրացնում են բանվորի աշխատանքի արդյունքը, քանի որ «...առանց մշակների աշխատանքի ոչ մի նյութ շահ չէր տա»[16],— գրում է Արծրունին։ Սակայն նա, բանվորի աշխատանքից բացի, նշում է նաև շահույթի առաջացման մեկ այլ աղբյուր՝ կապիտալը։ Այստեղ նույնպես Արծրունին տարբերվում է գռեհիկ տնտեսագետներից, որոնց կարծիքով շահույթի գոյացման միակ աղբյուրը կապիտալն է, այդ պատճառով էլ այն համարում էին կապիտալիստի օրինական եկամուտը։ Բայց Արծրունին գտնում է, որ «...Մշակը իր կողմից շահի առաջացման մեջ մասն ունենալով, պիտի և մասն ունենար նրա վայելման մեջ»[17]։ Իրականում ամբողջ շահույթը յուրացնում են կապիտալիստները։ Իրերի այսպիսի դրությունը հայ լիբերալ տնտեսագետի կարծիքով խիստ անարդար է։ Նա բողոքում է այն փաստի դեմ, որ բուրժուական հասարակարգը ամենևին չի հոգում կարգավորելու բանվորական հարցը։ Այդպիսի անտարբերության հետևանքը կարող է լինել այն, որ հասարակությունը ի վերջո, կկանգնի անլուծելի խնդիրների առջև։ Պրոլետարիատի թվաքանակի աճը, նրա դրության վատթարացումը «...Եվրոպայի գումարատեր հասարակության համար պատճառ են դարձել անլուծելի և արյունահեղ խնդիրների»[18],— գրում է Արծրունին։

«Մշակի» խմբագիրը կապիտալիստական հասարակարգի հակասությունների վերացման ուղիների հարցը քննում է արտադրողական ուժերի զարգացման տեսանկյունից։ Արտադրողական ուժերի զարգացումը նրա համար այն գերագույն նպատակն էր, որի իրականացմանը խոչընդոտող յուրաքանչյուր երևույթ քննադատվում է անաչառությամբ, նույնիսկ եթե այդ խոչընդոտը ստեղծում էր բուրժուազիան։ Նույն տեսանկյունից էր քննվում նաև աշխատանքի և կապիտալի փոխհարաբերության հարցը։ Աշխատուժի նորմալ վերարտադրության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, Արծրունու համոզմամբ, երկրամասի արտադրողական ուժերի զարգացման կարևոր պայմաններից է։ Հետաքրքիրն այն է, որ «Մշակը» բանվորական հարցն ամբողջ սրությամբ վեր է հանել այն ժամանակ, երբ Անդրկովկասում այդպիսի հարց դեռևս գոյություն չուներ, քանի որ բանվոր դասակարգը գտնվում էր ձևավորման շրջանում։ Սակայն կապիտալիզմի ուսումնասիրությունը հայ լիբերալ բուրժուական տնտեսագետների համար չէր սահմանափակվում Անդրկովկասի շրջանակներով։ Նրանք երկրամասի կապիտալիստական զարգացման ապագան, միանգամայն իրավացիորեն, փնտրում էին զարգացած եվրոպական երկրներում։ Այս առումով էր «Մշակում» քննվում նաև բանվորական հարցը։

---

13 «Մշակ», 1872, № 24։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում, № 43։

16 Նույն տեղում, № 27։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, № 23։

Թեև Անդրկովկասում 70-ական թվականներին նոր էր սկսում զարգանալ արդյունաբերությունը, այնուհանդերձ, նկատելի էին արդեն «առաջին ծաղիկները», որոնք ավետում էին նոր դասակարգի ծնունդը[19]։ Թերթի կարծիքով անհրաժեշտ էր օգտվել արդյունաբերության զարգացման այդ սկզբնական վիճակից և լրջորեն զբաղվել նոր ձևավորվող բանվոր դասակարգի դրության բարելավմամբ։ «Մենք ոչինչ չէինք ասելու մեր գործարանների արդյունաբերության դեմ,— գրում է «Մշակի» հոդվածագիրը,— եթե նրա մտցնելը երկրի մեջ պիտի բարվոքեր աշխատողների դրությունը, բայց ոչ թե լցներ դրամատերերի, այնպես էլ (ուրիշի աշխատանքով) լի գրպանները»[20]։ Արդյունաբերողները, «Մշակի» կարծիքով, հիմնելով գործարաններ, պետք է հոգային բանվորների նյութական ապահովության համար, քանի որ աշխատուժի նորմալ վերարտադրությունը ձեռնտու էր նաև իրենց։ Այս առումով ուշադրավ է Արծրունու հոդվածը Միրզոևի գործարանի բանվորների դրության մասին։ Այդ գործարանում բանվորներն աշխատում էին ամենածանր պայմաններում՝ շընչառության համար օդը չէր բավարարում, փոքր սենյակներում գարշահոտություն էր տիրում, իսկ «...տասն և չորս ժամվա աշխատանքից ազատ մնացած ժամանակը, այսինքն գիշերը մշակները անց են կացնում ամենքը միասին մի սենյակի մեջ հավաքված, որ ձմեռ ժամանակ փակված դռներով մշակի համար դժոխքից պակաս չպիտի լինի։ Այդ ամեն պայմանները աչքի առաջ ունենալով մենք տեսնում ենք, որ մշակները ստանում են ամենաչնչին ռոճիկը»,— գրում է «Մշակի» խմբագիրը[21]։ Աշխատանքի այսպիսի անմարդկային պայմանները խիստ մտահոգում էին նրան։ Արծրունին ամեն առիթով հարձակվում էր Անդրկովկասի արդյունաբերողների վրա, որոնք չէին հասկանում, որ բանվորների աշխատանքային պայմանների բարելավման համար պահանջվող լրացուցիչ ծախսերը ոչ թե ավելորդ շռայլություն են, այլ տնտեսական անհրաժեշտություն։ Նա այդ առիթով մատնացույց է անում օտարերկրյա արդյունաբերողներին, որոնց ձեռնարկություններում աշխատանքի պայմանները անհամեմատ բարվոք վիճակում էին, դրա հետևանքով էլ նրանց մոտ աշխատանքի արտադրողականությունը ավելի բարձր էր։ Արծրունին գտնում է, որ բանվորի աշխատավարձը չափազանց ընչին է նրանց ամենակենսական պահանջմունքները բավարարելու համար։ Որպես օրինակ նա նշում է Թիֆլիսի մոմի գործարանը, որտեղ «...աշխատողների մի ժամը վարձատրվում է 4 կոպեկով»[22]։ Հատկապես ցածր էր այդ գործարանում աշխատող կանանց աշխատավարձը, որոնք «...օրը ստանում են 20 կոպեկ, որ կանե 1 ½ կոպեկ ժամը։ Ահա ինչպես մենք հոգում ենք այն էակների մասին, որոնց աշխատանքի միջոցով մենք հարստանում ենք»,— գրում է նա։ Արծրունին զգուշացնում է ձեռնարկատերերին, որ գործերի այսպիսի ընթացքը կկանգնեցնի նրանց անհաղթահարելի արգելքների առջև, քանի որ բանվոր դասակարգը կձևավորվի նաև Անդրկովկասում և կսկսի պայքարել իր իրավունքների համար։ Ի վերջո, երկրամասը անխուսափելիորեն կկանգնի բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև խորը և անլուծելի հակասության առջև։ «Մենք հիմնում ենք ֆաբրիկաներ, գործարաններ, բազմացնում ենք մշակների թիվը, չհոգալով նրանց նյութական ապահովության վրա և մոռանում ենք կամ չենք իմանում, որ սրանով պատրաստում ենք մեզ ապագայի համար այնպիսի անհաղթահարելի արգելքներ, որոնք Եվրոպայի գումարատեր հասարակության համար պատճառ են դարձել անլուծելի և արյունահեղ խնդիրների»[23],— գրում է Արծրունին։ Նրա ուշադրությունից չի վրիպել այն հանգամանքը, որ ձեռնարկատերերը, բանվորների աշխատավարձը դիտելով որպես արտադրու-

19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում։
23 Նույն տեղում։

թյան ծախսերի մի մասը, ձգտում էին հնարավոր բոլոր միջոցներով նվազեցնել այն։ «Բանվորը նրանց (ձեռնարկատերերի—Հ. Թ.) աչքում,— գրում է Արծրունին,— մի անշունչ առարկա էր, որը պետք է օրական 24 ժամ բաներ միմիայն տիրոջը շահ տալու համար։ Այդ դեռ բավական չէ, մեր գործարանատերերը ոչ թե միայն չէին մտածում իրանց բանվորների թշվառ վիճակը փոքր ի շատե բարվոքելու մասին, բայց և աշխատում էին, որքան հնարավոր էր, չնչին օրավարձ տալ բանվորներին, որպեսզի իրանց արդյունագործական ձեռնարկության տված զուտ արդյունքը ավելի խոշոր լինի»[24]։ Ինչպես տեսնում ենք, հայ տնտեսագետը արձանագրում է այն իրողությունը, որ կապիտալիստական արտադրության նպատակը՝ առավելագույն շահույթի ստացումը, հակասության մեջ է աշխատուժի նորմալ վերարտադրության հետ։ Շահագործման այն եղանակը, երբ շահույթն ավելացվում է ի հաշիվ բանվորի աշխատավարձի իջեցման, աշխատանքային օրվա տևողության ավելացման, այսինքն՝ բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը միանգամայն անընդունելի է Արծրունու համար։ Այդպիսի շահագործում իրականացնելու եղանակներից մեկը աշխատանքի շուկայում բանվորների միջև մշտական մրցակցության ստեղծումն է, որը կապիտալիստներին հնարավորություն է տալիս աշխատավարձն իջեցնել աշխատուժի արժեքից։ «Այդ հարստահարական միջոցներից մեկն էր,— գրում է Արծրունին,— և պահպանել հնարավոր մրցություն բանվորների իրար մեջ... այդ կողմից շատ ձեռնտու էր մանավանդ մեր Բաքվի գործարանատերերին վարձել Պարսկաստանից եկող կեղտոտ, սակավապետ, էժան վարձով բավականացող պարսիկ բանվորներին»[25]։ Անդրկովկասի ձեռնարկատերերը արտասահմանից ներգրավելով էժան աշխատուժը իջեցնում են «...այնպես էլ չնչին օրավարձի գինը մինչև աներևակայելի minimum»[26]։ Արծրունին բողոքում է նաև աշխատանքային օրվա տևողության երկարացման դեմ։ Նա գտնում է, որ աշխատուժի նորմալ վերարտադրության համար անհրաժեշտ է, որպեսզի բանվորը բավականաչափ ժամանակ ունենա հանգստանալու և իր մտավոր ուժերը զարգացնելու[27]։ Յուրաքանչյուր մարդ, անկախ նրա զբաղմունքից, օրվա մի մասը պետք է աշխատի, մյուսը՝ զվարճանա և մտավորապես զարգանա, իսկ երրորդ մասը կատարելապես հանգստանա, այսինքն՝ քնի[28]։ «Այդ պատճառով,— գրում է նա,— օրը այսինքն 24 ժամ պարունակող ժամանակամիջոցը պետք է բնականապես բաժանվեր երեք մասի, որոնցից յուրաքանչյուր մասը, բաղկացած լիներ 8 ժամից»[29]։ Այսպիսով, Արծրունին հանդես է գալիս 8 ժամյա աշխատանքային օրվա պահանջով, գտնելով, որ այն աշխատուժի նորմալ վերարտադրության կարևոր պայմաններից մեկն է։

Իսկ ի՞նչ միջոցներ է առաջարկում Արծրունին բանվորների դրությունը բարելավելու համար։ Լինելով լիբերալ բուրժուազիայի գաղափարախոս, բնականաբար, բանվորների հեղափոխական պայքարը նրա համար անընդունելի էր։ Արծրունու համոզմամբ սոցիալական կոնֆլիկտներից հնարավոր է խուսափել, եթե ժամանակին բավարարվեն բանվորների տնտեսական պահանջները։ Նա խիստ բացասաբար է արտահայտվում եվրոպական այն պետությունների դեմ, որոնք բանվորների պահանջները բավարարելու փոխարեն փորձում են զենքի ուժով ճնշել բանվորական շարժումները։ Այդպիսի քաղաքականության հետևանքը, ըստ Արծրունու, կարող է լինել այն, որ տնտեսական պայքարը, ի վերջո, կվերաճի քաղաքականի։ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության հաջողության պատճառը Արծրունին տեսնում է բանվոր

24 Նույն տեղում, № 82։
25 Նույն տեղում։
26 Նույն տեղում։
27 Նույն տեղում, 1890, № 122։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում։

դասակարգի տնտեսական անմխիթար դրության մեջ։ Գերմանական պետությունը «...չկարողացավ նկատել այն մեծ և վտանգավոր շարժումը, որ անդադար պատրաստվում էր երկրի ներսում. նա անտես առավ սոցիալական շարժումը, որն առաջ եկավ ազգի տնտեսական աննախանձելի դրությունից»[30],— գրում է նա։ Արծրունին մեղադրում է Գերմանիայի կառավարությանը, որի կողմից «...մշակ դասի այդ անմխիթար տնտեսական դրության դարման անելու համար... գրեթե ոչինչ չկատարվեցավ»[31]։ Դեռ ավելին՝ պետությունն անընդհատ ավելացնում էր ռազմական ծախսերը և «անընդհատ ծանրացնում էր ժողովրդի վրա եղած հարկերը»[32]։ Այդպիսի դրությունը, ըստ Արծրունու, ավելի մեծ ուժ էր տալիս սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը, որի հիղինակությունն անընդհատ աճում էր ոչ միայն բանվորական շրջաններում, այլ նաև հասարակության մյուս խավերի մեջ, որոնք միանում էին այդ կուսակցությանը գլխավորապես այն բանի համար, որ «...նրա մեջ միջոց էին տեսնում ընդհանուր հեղափոխություն գործելու ամբողջ պետական կազմակերպության մեջ»[33]։ Սակայն, նրա կարծիքով, պետությունը ոչ թե «խիստ օրենքներով» պետք է պայքարի սոցիալիստների դեմ, այսինքն՝ արգելի նրանց գործունեությունը, այլ տնտեսական այնպիսի միջոցառումներով, որոնք հնարավորություն կտան բարելավել բանվորների դրությունը։ Արծրունին ընդհանրապես կողմնակից էր կուսակցությունների ազատ գործունեությանը և կտրականապես դեմ, երբ պետությունն արգելում է այս կամ այն կուսակցության գործունեությունը։ Նրա քաղաքական դավանանքը «կատարյալ ազատությունն» էր, որը սոցիալիստների վարդապետության դեմ պայքարելու ամենալավ միջոցն է։ Լինելով բուրժուազիայի գաղափարախոս, Արծրունուն սոցիալիզմի գաղափարը միանգամայն խորթ էր և անհասկանալի։ Սակայն ուշագրավն այն է, որ նրա մոտ տեսնում ենք նաև բուրժուական կուսակցությունների քննադատություն։ «Բուրժուական կուսակցությունը,— գրում է Արծրունին,— այնպիսի մի կուսակցություն է, որը պետության գործերի կառավարությունը կամենում է այնպիսի անձերի ձեռքը գցել, որոնք մեծ կապիտալների տեր անձինք են։ Ուրեմն այդ կուսակցությանը կարող են համակրել միայն հարուստ անձինք, ամենևին ոչ, այդ կուսակցությունը իր անդամների թվում հաշվում է և աղքատ մարդկանց մեծ մասամբ կրթված, որոնք ազդեցություն ունենալով պակաս կրթության տեր հարուստ մարդկանց վրա, ծառայում են նրանց նպատակներին, ստանում են նրանցից ապրուստի համար հարկավոր միջոցները և այսպես պաշտպանում են նրանց տիրապետությունը երկրի մեջ»[34]։ Արծրունին միանգամայն իրավացիորեն բուրժուազիայի շարքն է դասում ոչ միայն խոշոր կապիտալիստներին, այլև նրանց կողմից վարձված մտավորականությանը, որի խնդիրն է «պաշտպանել նրանց տիրապետությունը երկրի մեջ»։ Բնականաբար, վարձու մտավորականության ստվար մասը կազմում են բուրժուական ջատագովները, որոնք նույնպես իրենց գիտական հետազոտությունները ծառայեցնում են խոշոր կապիտալի շահերին։ Բուրժուազիան իրեն է ծառայեցնում պետությունը, մտավորականությունը, քանի որ նրա ձեռքում է հարստությունը, որի առջև ամեն բան չնչին է և, բնականաբար, «հասարակական կռվի» մեջ բոլոր հարցերը վճռվում են նրա օգտին, նշում է Արծրունին[35]։ Այդ պատճառով, նրա կարծիքով, պետությունը շահագրգռված չէ կարգավորելու բանվորական հարցը, քանի որ պաշտպանում է կապիտալիստներին։ «Մշակում» լույս տեսած «Գործադուլների խնդիրը» հոդվածում նշվում է, որ գործադուլները, և ընդհանրապես բանվորա-

30 Նույն տեղում, 1878, № 98։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում, 1872, № 43։

35 Նույն տեղում։

կան շարժումները, եվրոպական պետություններում դարձել են սովորական երևույթներ։ Գործադուլների պատճառը համարվում են ցածր աշխատավարձը, աշխատանքային ծանր պայմանները և աշխատանքի անարդար վարձատրությունը։ Սակայն եվրոպական պետությունները «...բանվորական շարժումների առաջն առնելու համար... շատ հաճախ է պատահել, որ ձեռք են առել խիստ և ճնշող միջոցներ, երբ ամենից գլխավոր դերը կատարել է զենքը և զորքը։ Այդ բանի մեջ ամենափայլուն օրինակը, ինչպես նույնանման շատ բաների մեջ, տվել է Գերմանիան՝ իշխան Բիսմարկի ղեկավարությամբ»[36],— բողոքում է հոդվածի հեղինակը։ Այսպիսով, բանվորների և կապիտալիստների փոխհարաբերության հարցերում եվրոպական պետությունները, հոդվածագրի կարծիքով, կանգնած են կապիտալիստների շահերի պաշտպանության դիրքերում, ուստի պետության այդպիսի քաղաքականությունը կարող է միայն սաստկացնել բանվորական շարժումները։ Գործադուլների առաջն առնելու համար անհրաժեշտ է վերացնել դրանց առաջացման պատճառները, այսինքն՝ բարձրացնել աշխատավարձը, բարելավել բանվորների աշխատանքի պայմանները, կրճատել աշխատանքային օրվա տևողությունը։ «Բավականություն տալ այդ պահանջներին-կնշանակի արմատախիլ անել բանվորական շարժումը»[37],— գրում է «Մշակը»։

Հայ լիբերալ բուրժուական տնտեսագետները դրականորեն էին տրամադրված արհմիութենական և կոոպերատիվ շարժումների նկատմամբ՝ համարելով դրանք ռեալ միջոցներ բանվորական հարցը կարգավորելու գործում։ Նրանք հատկապես մեծ հավատ էին ընծայում կոոպերատիվներին։ Դր. Արծրունու կարծիքով, բանվորներին խոշոր կապիտալի ճնշումից ազատվելու համար պակասում է միայն սեփական կապիտալը։ Ուրեմն, հարցն այն է, «...որ մշակ դասը թե՛ սպառման, թե՛ արդյունաբերության գործի մեջ կարողանա դրամագլուխ ձեռք բերել»[38]։ Այդ նպատակի համար տարբեր երկրներում բանվորական ընկերությունները դիմում են զանազան միջոցների. «Գերմանիայում երկու երևելի մարդ աշխատել են այդ հասարակական խնդիրը իրագործելու համար Շուլցե-ֆոն Դելիչ և Ֆերդինանտ Լասալ։ Առաջինը մշակների ընկերակցության գաղափարը հիմնում է ինքնօգնության վրա, այսինքն մշակների խնայողության և փոքր տուրքերով բաժանորդության վրա,— երկրորդը պարտավորվում է պետությանը փոխ տալ մշակներին հիմնական դրամագլուխ, նրանց համար մատչելի տոկոսներով»[39]։ Արծրունին նախապատվությունը տալիս է Շուլցե ֆոն դելիչյան կոոպերատիվների կազմակերպմանը, որը հիմնվում է ինքնօգնության սկզբունքի վրա, որովհետև, ինչպես վերը նշվեց, նա հավատ չէր ընծայում պետական օգնությանը։ Իսկ հնարավոր է, արդյոք, այդպիսի կոոպերատիվների ստեղծումն Անդրկովկասում։ Այս հարցն էր հիմնականում մտահոգում Արծրունուն։ Կոոպերատիվներ հիմնադրելու համար «...հարկավոր է մի գլխավոր բան,— գրում է նա,— այն է զանազան ընկերակցություններ հիմնելու ազատություն մի հասարակության մեջ»[40]։ Հայ տնտեսագետն իր ողջ գործունեության ընթացքում, պայքարելով ֆեոդալական մնացուկների դեմ, լավ էր հասկանում թե դրանք ինչպիսի արգելք կարող են հանդիսանալ նման ձեռնարկումների համար։ Նա զայրույթով է նշում, որ Անդրկովկասի հասարակությունը զուրկ է այդ ազատությունից։ «Կարելի է ժողովուրդը պատրաստ է հիմնարկությունները իրագործել,— գրում է Արծրունին,— բայց հասարակության մեջ չկա այնքան ազատություն, որ թույլ տված լիներ զանազան ընկերակցություններ հիմնելու»[41]։ Նա լավ էր հասկանում, որ Անդրկովկասի պայման-

36 Նույն տեղում, 1889, № 73։

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում, 1872, № 47։

39 Նույն տեղում։

40 Նույն տեղում, 1877, № 17։

41 Նույն տեղում, № 121։

ներում հնարավոր չէր իրականացնել հատկապես կոոպերատիվների երկրորդ ձևը, երբ վարկավորողի դերում պետք է հանդես դար ցարական իշխանությունը, որի գաղութային քաղաքականության հուսալի հենարանը տեղական աղնվականությունը և խոշոր առևտրական բուրժուազիան էին։ Էժան վարկավորման ամենամեծ թշնամին, Արծրունու կարծիքով խոշոր առևտրական բուրժուազիան էր, որի տնօրինության տակ էին գտնվում վարկավորման բոլոր աղբյուրները։ Բանկային վարկը նրա ձեռքում փոխարկվում էր վաշխառուական վարկի, որը մանր արտադրողների համար վարկավորման միակ աղբյուրն էր։ Վաշխառուական վարկը առևտրական բուրժուազիայի ձեռքում դառնում է բազմաթիվ մանր արտադրողների շահագործման միջոց, որոնք, ի վերջո, ունեզրկվելով բազմացնում են վարձու բանվորների քանակը։ Այդ պատճառով էլ Արծրունին թե՛ մանր արտադրողների և թե՛ բանվորական կոոպերատիվների ստեղծման միակ հնարավոր ուղին Անդրկովկասում համարում էր ինքնօգնությունը, թեև ինքն էլ հասկանում էր, որ ծայրահեղ ցածր աշխատավարձը հազիվ թե բավականացներ այդ նպատակի իրականացմանը։ Բանվորական ընկերակցություններ հասկացության տակ Արծրունին նկատի ուներ նաև արհեստակցական ընկերությունները, որոնք, նրա կարծիքով, կարևոր դեր են խաղում Եվրոպայի տնտեսական կյանքում։ Արհմիությունների շնորհիվ բանվորները կարողանում են կապիտալիստների հետ պայքարում հասնել տնտեսական շոշափելի հաջողությունների «...բանվոր դասակարգի ամենագործնական զենքը գործարանատերերի դեմ կռվելու համար գործադուլն է, այսինքն աշխատանքի ժամանակավոր դադարումը»[42]։ Սակայն աշխատանքի ժամանակավոր դադարը կարող են իրականացնել միայն արհեստակցական միությունները, որոնք ունեն հարուստ գանձարաններ։ «Գործադուլը այն ժամանակ միայն հաջողություն կունենա, երբ բանվորների գանձարանները հարուստ են, որովհետև աշխատանք դադարեցրած բանվորները իրանց ընտանիքներով կերակրվում, ապրում են այդ իրանց գանձարանների վերցրած փողով, ուրեմն որքան ավելի հարուստ կլինի բանվորական դրամարկղը, այնքան ավելի երկար կկարողանան դիմադրել բանվորները գործարանատերերի առաջարկված պայմաններին և իրանց ուզած պայմաններն ընդունել տալ»[43],— բացատրում է Արծրունին։ Նրա համոզմամբ, եթե Անդրկովկասում դեռևս հնարավոր չէ ստեղծել բանվորական ընկերակցություններ, ապա հետագայում, երբ կձևավորվի բանվոր դասակարգը, նրա մեջ կզարգանա ինքնօգնության գաղափարը, արհմիությունների և կոոպերատիվների ստեղծումը կդառնա անխուսափելի։ Նա հույս էր հայտնում, որ բանվորական հարցը կարգավորելու անհրաժեշտությունը, ի վերջո, կըմբռնի նաև պետությունը։ Աշխատանքի և կապիտալի միջև հակասության մեղմացումը, ըստ Արծրունու, պետք է դառնա պետության կարևորագույն ֆունկցիաներից մեկը։

Այսպիսով, Գր. Արծրունին տեսնում էր կապիտալիզմի հակասությունները, մերկացնում նրա ստվերոտ կողմերը, նշում այն խոր անտագոնիզմը, որ գոյություն ուներ աշխատանքի և կապիտալի միջև, սակայն այդ հակասությունների վերացման համար նրա առաջարկած ծրագրերը մնում էին լիբերալ բուրժուական աշխարհայացքի շրջանակներում։

---

42 Նույն տեղում։

43 Նույն տեղում։

ГР. АРЦРУНИ О ВЗАИМООТНОШЕНИИ ТРУДА И КАПИТАЛА

ГРАИР ТАМРАЗЯН

Резюме

Взаимоотношение труда и капитала—один из центральных вопросов в истории армянской экономической мысли второй половины XIX в. Орган армянских либералов газета «Мшак» со всей остротой подняла рабочий вопрос в то время, когда рабочий класс в Закавказье находился еще на стадии формирования. Исследование капитализма армянскими либерально-буржуазными экономистами не ограничивалось рамками Закавказья: будущее развитие края они видели в развитых европейских странах. Именно с этих позиций расматривались противоречия капитализма. По убеждению видного представителя армянской либерально-буржуазной экономической мысли Гр. Арцруни, рано или поздно Закавказье встанет перед глубоким противоречием между трудом и капиталом. Устранение противоречий капиталистического общества Гр. Арцруни расматривал прежде всего с точки зрения развития производительных сил. Создание необходимых условий для нормального воспроизводства рабочей силы Арцруни считал одним из важных условий для развития производительных сил. С этой позиции он и рассматривал взаимоотношение труда и капитала.

Гр. Арцруни отнюдь не затушевывал противоречия капитализма, однако был убежден, что капитализм путем социально-экономических реформ в состоянии постепенно устранить эти противоречия. В смягчении противоречий между трудом и капиталом он большую роль придавал также созданию профсоюзов и кооперативов.